№ 23 Հինգշաբթի Փետրվարի 25 — 1888 — Հինգշաբթի Փետրվարի 25 № 23

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզու։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ТИФЛИС 25 ФЕВ 1888 ПОЧТАМТ

ՆԵՐԿԱՅ 1888 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձունակայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» *գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով.* ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», *իսկ արտասահմանից.* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պանդխտութեան հետևանքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Երևանի թեմական դպրոցի նոր շինութեան հարցը. Հասարակական գործունէութիւնը Թուրքերի մէջ. Ներքին լուրեր.*—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Բալկարական հարցը. Արտաքին լուրեր.*—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ *վաշխառուն.*

ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

—

Երևանի նահանգի զանազան գաւառական քաղաքներից և գիւղերից խումբ խումբ, պանդխտութեան գաւազանը ձեռք առած՝ հայ գիւղացին աշխատութեան է գնում, դիմելով դէպի Բաթում, Բագու, Թիֆլիս և մեր երկրի այլ մեծ կենտրոնները։ Աղստաֆայի երկաթուղու կայարանի շուրջը, խանութների պատերի մօտ, համարեա ամեն օր կը տեսնէք տասնեակ հայ երիտասարդներ, քաջառոյզ և զուարթ, որոնք նոր են թողել իրանց տուն ու տեղը, ծննդավայրը, կնոջ ու զաւակներին,—և գնում են աշխատութեան՝ հեռու և անծանօթ տեղեր.... Աղքատութիւնն է ստիպում դրանց այդ վտանգաւոր քայլն անելու և նոյն իսկ սաստկաշունչ ձմեռվայ ծանը օրերին նրանք վստահանում են հեռանալ ծննդավայրից դէպի մարդաշատ քաղաքները, մի կտոր հաց վաստակելու, իրանց մերկ ընտանիքին ապրուստ հայթայթելու, նրան աղքատութիւնից ազատելու, գոնէ մի քանի կոպէկներ ձեռք բերելու՝ աշնան համար սերմացու ցորեն գնելու համար։ Գիւղացին սերմացու էլ չունի։

Արդէն յայտնի է, որ այս տարի Երևանեան նահանգը հացահատիկի կողմից աղքատ է մնացել, մանաւանդ Նոր-Բայազէտի գաւառը։ Եւ պանդխտութեան դիմող գիւղացիների մեծ մասը Նոր-Բայազէտի գաւառի զանազան գիւղերիցն է, ինչպէս մեզ գրում են մեր թղթակիցները, գլխաւորապէս՝ Դալի-Ղարդաշ, Քեօսա-Ահմատ և դրանց շրջակայ գիւղերից։

Տարվայ ընթացքում հարիւրաւոր տղամարդիկ դիմում են այսպիսով դէպի մարդաշատ այլ և այլ քաղաքներ։ Պանդուխտներից շատերը տարիներով չեն վերադառնում, շատերը մի քանի ամսից յետոյ, զըզջալով իրանց արած քայլի մասին, շտապում են վերադառնալ ծննդավայրը, բայց արդէն կիսամեռ դրութեան մէջ, շատ անգամ կէս ճանապարհին, հայրենի գիւղին չը հասած՝ մեռնում են։ Իսկ վերադարձողներն էլ, չը դիմանալով Բագուի, Բաթումի, Թիֆլիսի անսովոր, վատառոյզ կլիմային ու աննպաստ կենսական հանգամանքներին, մանկութիւնից սովոր լինելով լեռնային առոյգ և պարզ օդին ու կերակուրին,—մեծ մասամբ կրում են իրանց կազմուածքի մէջ մի որ և է անբուժելի ախտ, թոքախտ, ընդհանուր թուլութիւն, ոյժերի սպառումն, շատ անգամ և որ և է վարակիչ վատ ախտ.....

Եւ ահա, փոխանակ բարեկարգելու իր և իր ընտանիքի կեանքը և տնտեսական դրութիւնը, պանդխտութիւնից իր ծննդավայրը վերադարձած հայ գիւղացին աւելի էլ վատթարացնում է իր և իր ընտանիքի վիճակը, քանի որ նա վերադառնում է հիւանդ, ուժասպառ, անընդունակ աշխատութեան, և դրա հետ միասին և դատարկ գրպանով։

Իսկ մինչև որ չէր դիմած պանդխտութեան, նոյն հայ մշակը, նոյն հայ երկրագործը, կամ արհեստաւորը քիչ թէ շատ, լաւ թէ վատ՝ դարձեալ մի կերպ կառավարում էր իր ընտանիքը, դարձեալ մի կերպ ապրում էր..... Գոնէ կորցրած չէր ամեն վենդանի մարդու համար ամենաթանգագին համարվողը՝ այն է առողջութիւնը։

Այժմ ինքն ըստ ինքեան հարց է ղըրվում. եթէ այդպէս է, եթէ հայ գիւղացին, հայ արհեստաւորը իր ծննդավայրում, իր ընտանիքի հետ ապրելով, կարող էր մի կերպ, վատ թէ լաւ համ ինքն ապրել համ կառավարել իր օջախը,—արդեօք պանդխտութեան դիմելը ի՞նչ օգուտ տուեց նրան, քանի որ նա իր ունեցածն էլ կորցնելով, ոչինչ հեշտութիւն կեանքի մէջ չէ կարողացել ձեռք բերել։ Եթէ իր ծննդավայրում նա մի կերպ կարողանում էր ապրել և գոնէ առողջ լինել,—արդեօք պանդխտութեան շարժառիթը ճշմարիտ աղքատութիւն է եղել, թէ մի տեսակ անբացատրելի, անդիտակցական ախտ դէպի մշտական պանդխտութիւն, որ յատուկ է ամեն մի հային։

Տան մէջ, իր ծննդավայրում, հայ մշակը գոնէ մի կերպ ապրում է և ապրեցնում է իր ընտանիքը, գոնէ առողջ, թարմ և զուարթ է լինում,—իսկ օտարութիւնից վերադառնալով նա իր ունեցածն էլ կորցրած է լինում՝ այն է առողջութիւնը, մի և նոյն ժամանակ հասած չը լինելով այն նպատակին, որ և եղել է նրա պանդխտութեան գլխաւոր շարժառիթը՝ փոքը ի շատ փող վաստակելուն.... Ընդհակառակն, նա վերադառնում է՝ համ իր առողջութիւնը կորցրած լինելով, համ էլ դատարկ գրպանով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

—

Երևանի թեմական այժմեան դպրոցը ունէ մի քանի յարմարութիւններ, որոնցից գլխաւորը այն է, որ նա գտնվում է ս. Սարգիս մայր-եկեղեցու, թեմական կոնսիստորիայի և առաջնորդարանի կողքին։ Այդ հիմնարկութիւնների մէջն են կատարվում բոլոր ուսումնարանա-ազգային և եկեղեցական մեծ հանդէսները և տօները, այդտեղ է կենտրոնացած Երևանի թեմի միջնակարգ կրթական և կառավարչական դէկը, այդտեղից է սարածվում ամբողջ թեմի հայ լուսաւորչական եկեղեցու կրթական գործը։ Ամենքի վրա այդ կենտրոնը, որտեղ կարծես այդ բոլոր հիմնարկութիւնները համախմբված, սիրով և համերաշխութեամբ առաջ են տանում ամբողջ թեմի կրթական և բարոյական գործը, թողնում է մի լաւ տպաւորութիւն։ Այդ բոլոր չինութիւնների անյարմարութիւնը այն է միայն, որ դրանք բոլորն էլ համարեա՝ հնացած են և անհամապատասխան են իրանց նշանակութեանը։ Օրինակ, թեմական կոնսիստորիայի «արխիւը» տեղի սղութեան պատճառով զետեղված է միայն մի սենեակում և գործերը այնպէս անկանոն կուտակված են իրար վրա, որ մի տարում հազիւ կարելի է կարգի բերել։ Թեմական դպրոցը մանաւանդ՝ թէ իր հնութեան և թէ սղութեան պատճառով, համարեա անպէտք է այդ նպատակին, մինչդեռ այդ դպրոցը բաղկացած էր չորս դասատնից և նախապատրաստական մի երկու դասատներ, դեռ ուսումնարանները փակվելուց առաջ, զետեղված էին տեղիս ս. Պողոս-Պետրոս եկեղեցու բակում, այդ դպրոցը բաւական ընդարձակ էր, բայց ծխական եկեղեցական դպրոցները փակվելուց յետոյ, թեմ. դպրոցի վարչութիւնը ստիպված էր այդ նախապատրաստական-ները տեղափոխել թեմ. դպ. շինութեան մէջ, այնպէս, որ ուսուցչական սենեակի նախասենեակը յատկացվեցաւ չորրորդ դասատան համար, մեծ նախասենեակի մի մասը կտրվեցաւ և յատկացվեցաւ ուրիշ դասարանների համար, իսկ ուսուցչական սենեակը միակն էր, որ ծառայում էր դրադարանի, վարչական դիւանատան և թէ մասնաւոր այցելուների ընդունելութեան համար։ Այդ պակասութիւնը աւելի չոչափելի էր այս տարի, երբ բացվեցաւ վեցերորդ դասատունը։

Այս բոլորը աչքի առաջ ունենալով, միշտ աշխատվում են այդ դպրոցի շինութիւնը այնպէս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՇԽԱՌՈՒՆ

—

(ՈՒՍՈՒՑՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Ծերունին ոգևորվեց, պահեց տէրողորմեան, վերկացաւ տեղից և շարունակեց.

—Գարնան առաւօտ էր, ցանքերս արել պըրծել էինք, սպասում էինք քաղցին։ Չը գիտեմ ինչու համար դուրս եկայ տնից, տեսնեմ Ժողովուրդը վազում է դէպի Սողոմոնենց տունը։ Ես էլ գնացի տեսնեմ ինչ է պատահել.... ոչ էի գնացել.... Պրիստաւը Պետրոս աղայի հետ կանգնած Սողոմոն ափոր դրան առջև գրում էր, ինչ որ դուրս էին բերում տնից չափարները։ Դուրս են քաշել արդէն մի կով։ Լուսահոգին տխուր, վիզը զարնված մարդու նման, ընկել մընացել էր տան դրան քարի վրա։ Նրա որդին, Աբրահամը, մօտը լուռ կանգնած՝ նայում էր Պետրոս աղային։ Աբրահամը բոլորովին դունաթափված էր, նրա աչքերից կարծես կրակ էր թափում, բայց նա լուռ էր.... Դուրս քաշեցին մի զոյգ եղներ.... Լուսահոգին էլ չը կարողացաւ զսպել իրան, վրա վազեց, փաթաթվեցաւ եզի վզին և սկսեց ցնդվածի նման համբուրել շուարած կենդանու ճակատը ու լալ.... այո, այն 70—75 տարեկան մարդը երեխայի նման լալիս էր....

—Է՛հ, թող, Սողոմոն ափէր, երկու ջուխտ ունիս, մէկը քեզի, մէկը ինձի,—ասում էր Պետրոս աղան։

—Խեղճի ոտները ծալվեցան, և նա վայր կընկնէր, եթէ Աբրահամը չը հասնէր և չը գրկէր նորան։

Ժողովուրդը սկսեց ցածր տրտնջալ։

Տան ներսից լսվեց կնոջ աղաղակ.... մարդու սիրտը կոտոր-կոտոր էր լինում.... Դուրս քաշեցին մի փոքրիկ կարմիր կով։ Սանդուխտ անան պինդ կպել էր կովին և հետը քարշ գալիս։ Նա էր լացողը։

—Տարէք, ամեն բան տարէք, աղաղակում էր նա, մէնակ կարմիր կովս մի՞ք տանի, տանս կաթնակերը մի՞ք տանի.... իմ ձեռքով մեծցուցել, հասուցել եմ, մի՞ք տանի....

—Անաստուածներ, գոռաց Աբրահամը մի այնպիսի ձայնով, որ բոլոր ժողովուրդը և նոյն ինքը Պետրոս աղան դողացին, անհաւատներ, ես ձեր.... բղաւեց նա և մօրը դրկեց, տուն տարաւ։ Ժողովուրդը տրտունջը աւելացրեց, լավեցան խուլ յանդիմանութիւններ, բայց ով կը համարձակվէր բարձրացնել ձայնը, դէմինը Պետրոս աղան էր։

Այստեղ ծերունին լռեց, սրբեց աղլուխով ճակատի քրտինքը, նստեց, մի քիչ հանգստացաւ և ապա շարունակեց աւելի հանդարտ։

—Ես հեռացայ նրանից։ Մօտեցայ Սողոմոն ափորը, որ հեկեկում էր, սկսեցի մխիթարել նրան.... ինչքան կարող էի,...

—Օ՛ֆ, տէր-տէր ջան, ասում էր նա լալով,—ես չեմ տանի էս ամօթը, ես կը մեռնեմ....

Կովից յետոյ դուրս քաշեցին մի աչառ....

—Լուսահոգին դրուստ էր ասում. չը կարողացաւ տանել ամօթն ու կսկիծը և մի քանի օրից յետոյ փոխվեց այն աշխարհը, ուր ոչ Պետրոս աղա կայ, ոչ պրիստաւ, որին Պետրոս աղան դիմէր.... Հոգեարքին ես մօտն էի. մինչև վերջին շունչը նա կրկնում էր. «ամօթ, ամօթ» և այդ բառը բերանը անցաւ դէպի յաւիտենականութիւն։ Բայց դրանով չը վերջացաւ բոլորը։ Նրա որդին, Աբրահամը, ընկած հօր տաք դիակի վրա լալիս էր, բայց դրանով էլ չը վերջացաւ. մէկ էլ յանկարծ վեր թռաւ, նայեց չորս կողմը...։ Բայց ինչ կերպարանք.... ես մի չաբաթ ամեն գիշեր տեսնում էի նրան երազումս.... նա այն բոպէին գժված էր....

—Մեռա՛ւ, բղաւեց նա ու դուրս քնկաւ տանից։ Վազեցինք նրա յետևից, բայց ինչ կարող էինք անել, ով կը համաձայնվէր մօտենալ այն բոպէին Աբրահամին։ Մի քանի գիւղացի ուզեցան բռնել, բայց նա դուրս քաշեց մօտակայ սայլի ցիցը և այնպէս բղավեց «մի՞ք մօտենայ», որ բոլորը յետ քաշվեցան։ Նա վազեց ուղղակի գիւղի դիւանատունը, մենք հետևեցինք նրան։ Այդտեղ այդ բոպէին գտնվում էր Պետրոս աղան, ընկաւ ներս և վայրենի գազանի նման յարձակվեց նրա վրա։ Մինչև դիւանատունը գտնվողները ոտքի ելան, մինչև ժողովուրդը վրա հասաւ, Աբրահամը իր ձեռքի ցիցով այնպէս հասցրեց Պետրոս աղայի գլխին, որ այն ահագին, գոմշի նման մարդը գետին գլորվեց։ Սկսվեց կռիւը, գիւղական այն կռիւներից մէկը, երբ էլ ոչ սայլի ցից է մնում, ոչ դէկինակ—բոլորը ջարդվում են մարդու մարմնի վրա։ Ժողովրդի մեծ մասը, ի հարկէ, Աբրահամի կողմն էր, բայց Պետրոս աղայի կողմն էլ քիչ մարդ չէր. միայն որդիքը, թոռները ու ազգականները կարող են մի փոքր գիւղ կազմել։ Շատ գլուխ ու ոտք ջարդվեցաւ, շատ մարդիկ վիրաւորվեցան, վերջապէս իւզբաչուն չափարների և ժողովրդի օգնութեամբ աջողվեց կռիւն վերջ տալ։

—Աբրահամին բռնեցին, ձեռք ու ոտքը կապեցին, գցեցին մի ամբար։ Երկու օրից յետոյ երբ ենջեցեալին թաղեցինք, Աբրահամին տեղափոխե-

վերափոխել, որ թէ ուսումնարանը ընդարձակ լինի և թէ հանդիսաւոր օրերի համար մի մեծ դահլիճ լինի, այն ինչ այժմ հանդիսականների մեծ մասը ոտքի վրա են մնում կանգնած և այն էլ նախապաշարում։ Եւ այն ժամանակ, երբ այդ շինութիւնների համար անհրաժեշտ էին այդ փոփոխութիւնները, տեղիս ս. առաջնորդը մտադրվեց առաջնորդարանի կողքին մի ընծայարան շինել տալ, որի վրա ենթադրվել էր ծախսել 6,000 ր., որը պէտք է հաւաքվէր ամբողջ թեմի եկեղեցիներից։ Այժմ այդ միտքը թողնված է և դրա փոխարէն ս. առաջնորդը մտադրութիւն ունի քաղաքի կենտրոնում մի նշանաւոր տեղում շինել տալ աւելի ընդարձակ ու շքեղ թեմական դպրոց, իսկ այժմեան դպրոցի շինութիւնը յատկացնել կօնսիստորիային, ընծայարանին և ուրիշ հիմնարկութիւններին։

Այդ միտքը շատ գեղեցիկ ու միանգամայն դովելի է, մանաւանդ որ այժմեան դպրոցը քաղաքի կենտրոնից բաւական հեռու է, այնպէս որ փոքր աշակերտները ձմեռ ժամանակ դժուարանում են երթևեկել և ճանապարհը դէպի այդ դպրոցը անցնում է թուրք քեռաբաչիների և հայ միկիտաններին միջով, որտեղում հարբեցող հասարակութեան վարքը ևս քիչ չէ աղդում դպրոցի սաների վրա։

Աչքի առաջ ունենալով այդպիսի նշանաւոր շինութեան հարցը, մենք ուզում ենք մեր կողմից մի քանի խօսք ասել դորա մասին։

1) Որպէս զի վերևում յիշած տպաւորութիւնը ևս կարողանան այդ հիմնարկութիւնները թողնել ամեն մի այցելողի վրա, այն է միախմբված լինեն, թեմական դպրոցի համար ամենայարմար տեղը ս. Պողոս-Պետրոս եկեղեցու բակը կարող է լինել, որտեղ բացի այդ եկեղեցին՝ շինված է նաև տեղական ս. Գայանեան օրիորդաց դպրոցը, մանաւանդ որ այդտեղի կողքին կայ մի փոքր տեղ ևս, որը կարելի է գնել ու միացնել եկեղեցու բակին։

2) Շինութիւնը չինել աւելի հիմնաւոր, աւելի ընդարձակ ու երկյարկանի, որտեղ բացի դասատներին յատկացրած սենեակներից, ունենար մի քանի աւելի սենեակներ, որտեղ աղքատ աշակերտները կարողանան ճաշերից յետոյ հաւաքվել ու պատրաստել դասերը, շինել տալ մի ընդարձակ դահլիճ հանդիսաւոր օրերի համար։

3) Աչքի առաջ ունենալով դիմնաղիաների պատրաստական դասատների փակված լինելը, երեխաների ծնողները այժմ բոլորը դիմում են թեմական դպրոցը, որտեղ տեղ չը լինելու պատճառով մերժվում են. դորա համար հարկաւոր է բանալ զուգընթաց նախապատրաստականներ։

4) Որովհետև այդ դպրոցում այժմ կայ բաւական հարուստ գրադարան, դորա վրա աւելացնել մի քանի հարիւր բուբլու գրքեր ևս և այդ գրադարանը վերափոխել հասարակական գրադարանի, որի մուտքը յատկացնել այդ դպրոցին. ի հարկէ, այդ գրադարանի համար չինել մի ընդարձակ դահլիճ։ Այդ բանը մեծ աջողութիւն կարող է ունենալ, որովհետև այժմ Երևանում ոչ մի հասարակական գրադարան չը կայ, իսկ ընթերցանութեան պահանջը մեծ է։

5) Շինութիւնը աւելի գեղեցիկ և հիմնաւոր անելու համար կազմել աւելի հիմնաւոր նախագիծ և ձեռնարկել այժմեանից։ Դրա համար մենք կարծում ենք կը ծախսվի մօտ 20,000 բուբլի, որի կէսը, 10,000 բուբլին լրացնել թեմի եկեղեցիներից ս. առաջնորդի ենթադրած հաւաքվելի 6000 բուբլով (ընծայարանի շինութեան համար), այստեղացի եղ. Գէորգեանների 1200 բուբլով, որով խոստացել են մի դահլիճ շինել այժմեան դպրոցի կողքին և մնացած 2800 բուբլին դպրոցի փողերով, իսկ միւս կէսի համար ժողովարարութիւն բանալ։

Այդպիսի ժողովարարութիւնը, մենք կարծում ենք, մեծ աջողութիւն կունենայ. դրան սիրով կը մասնակցեն թէ թեմի ժողովուրդը և թէ երևանցիները, մանաւանդ երբ ինքը ս. առաջնորդն ևս, ինչպէս լսել ենք, պատրաստականութիւն է յայտնել այդ նպատակի համար նուիրել 5000 բուբլի։ Դրա համար քարոզելու, բացատրելու և ժողովրդի մէջ այդ նպատակի համար ժողովարարութիւն բանալու համար նախապատրաստելու լաւ միջոց ահա մի քանի օրից յետոյ ներկայանում է՝ Վարդանանց տօնը, երբ ժողովուրդը սիրով գալիս է այդ հանդիսին, բայց և տեսնում է ուսումնարանի սղութիւնը և այդպիսի հանդէսների համար անյարմար լինելը։

Ս. Տ. Մ.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԷՋ

—

Բաղուում, տեղացի մի թուրքի նախաձեռնութեամբ, ինչպէս արդէն դիտեն ընթերցողները, կազմվում է մի բարեգործական ընկերութիւն։ Թուրքերի մէջ այդ բարեգործական ընկերութեան կազմելու ձգտումը մի ուրախալի երևոյթ է։ Ուրախալի է ոչ թէ միայն այն տեսակէտից, որ այդպիսի մի ընկերութիւն կարող է բարեգործական նպաստ ցոյց տալ թէ Բաղուի մէջ և թէ Բաղուից դուրս դտնվող օգնութեան կարօտ շատ մահմեդականների, այլ դիւաւորապէս այն տեսակէտից, որ այդպիսի մի հասարակական—ընկերական գործունէութեան սկզբունքի երևան գալը Անդրկովկասի թուրք ազգաբնակութեան մէջ՝ մի աչքի ընկնող երևոյթ կարող է համարվել մեր մահմեդական հարևանների հնութեան վարագոյրով ծածկված կեանքում։ Այս դէպքում, պէտք է խոստովանել, աւելի նշանակութիւն ունի սկզբունքը, քան թէ այն բարեգործութիւնը, որ կարող է ապագայում անել նոր կազմակերպվող ընկերութիւնը, քանի որ թուրք ազգաբնակութեան մէջ դա հասարակական գործունէութեան համարեա թէ առաջին նշանն է։

Ո՞ւմ չէ յայտնի, որ Անդրկովկասի բազմաթիւ մահմեդականները, որոնք դարերի ընթացքում՝ շաղկապված են ուրիշ տեղական ազգերի հետ տնտեսական շահերով, մինչև այժմ էլ դտնվում են մի և նոյն բարոյական թմրութեան և մի և նոյն մտաւոր մեռելութեան մէջ, որի մէջ գտնվում էին հարիւրաւոր տարիներ առաջ։ Կրօնական աւանդութիւնները արգելք եղան այդ ինքն ըստ ինքեան ընդունակ ժողովրդին չուտով օգտվելու այն բոլոր նոր մտքերից, որոնք փոքր առ փոքր մուտք դործեցին նոյն իսկ դոցա դրացի ազգերի մէջ, և որոնց շնորհով այսօր բաւական տարբերութիւն կայ Անդրկովկասի հայ, վրացի և թուրք ազգաբնակութեան մէջ։ Մինչև այժմ էլ թուրքերի մէջ չը կարողացան արծարծվել այն բոլոր խնդիրները, որոնք իւրաքանչիւր ժողովրդի մտաւոր զարդացման սկզբնական նշաններն են համարվում. մինչև այժմ էլ թուրքերը չը կարողացան մի փոքր յեղափոխութիւն մտցնել իրանց մզկիթների կողքին դոյութիւն ունեցող դպրոցների մէջ. մինչև այժմ էլ թուրքերի մէջ չը կարողացաւ ստեղծվել մամուլ, թէև մի քանի անդամ փորձեր են եղել լրագիրներ հիմնել և հրատարակել. մինչև այժմ էլ Անդրկովկասի թուրքերի մէջ ոչ թէ միայն դրականութիւն չը կայ, այլ և նոր, ոչ-կրօնական դրականութեան հիմքը անդամ չէ դրված, և այլն և այլն, Այդ բոլորը, ի հարկէ, հետևանք է այն ցաւալի իրողութեան, որ թուրքերի մէջ մինչև այժմ էլ առաջ չեկաւ մտաւոր և հասարակական դործիչների մի շրջան, որը հասարակական դործերի դեկավար հանդիսանար, և քիչ-քիչ սկսէր թուրքերի կեանքին պատուաստել հասարակական կեանքի զարդացման ֆակտորները։ Թուրքաց փոքր ի շատէ կրթված, բայց փոքրաթիւ երիտասարդութիւնը սովորաբար շատ թեթև է նայել իր հասարակական պարտաւորութիւնների վրա, և համարեա չէ մտածել իր տգէտ եղբայրակիցների առաջադիմութեան մասին, և զարմանալի չէ ուրեմն, որ թուրք ազգաբնակութիւնը մինչև այժմ էլ ներկայացնում է մի այնպիսի տարբ, որը, ըստ երևոյթին, շատ դժուար է ենթարկվում կուլտուրական կեանքին, և մինչև անդամ շատ դէպքերում հանդիսանում է իբրև կատաղի թշնամի ամեն մի նորութեան, ամեն մի նոր մտքի և ամեն մի նոր դաղափարի։

Այդ երևոյթը ուրախալի է նոյն իսկ երկրի ընդհանուր զարդացման տեսակէտից, և այդ պատճառով հասկանալի է, թէ ինչու ուրախալի և ուշադրութեան արժանի է նոյն իսկ այնպիսի մի ցանկութիւն, ինչպէս Բաղուի նման քաղաքում, բազմաթիւ և հարուստ թուրքերի մէջ մի բարեգործական ընկերութիւն հիմնելու ցանկութիւնն է։ Ամեն մի նորասթափ ժողովրդի մէջ հասարակական գործունէութիւնը հանդէս է գալիս բարեգործական ձեռնարկութիւններով, և այդ պատճառով իրաւունք կայ յուսալու, որ Բաղուի թուրքերի մէջ մի բարեգործական ընկերութեան հիմնելը խրատական օրինակ կը լինի Անդրկովկասի միլիոնաւոր թուրքերի սակաւաթիւ ինտելիդենցիայի համար, որի մէջ պարտաճանաչութեան զգացմունքը, տարաբաղդաբար, դեռ շատ թոյլ է....

Խ. Մ.

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԷԼԱՒԻՑ մեզ գրում են։ «Փետրվարի 14-ին վախճանվեցաւ այստեղ Յովսէփ Փարեմուզեան, 30 տարեկան հասակում։ Նրա երիտասարդ եղբայրը, պ. Մնացականը, յարգելով հանդուցեալի յիշատակը, նուիրեց տեղիս հայոց ուսումնարանին 50 բուբլի։ Դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը նուիրատու պարոնին։»

—

Փետրվարի 22-ին, երկուշաբթի օր, ԹԻՖԼԻՍԻ թատրոնում ներկայացվեցաւ «Հուգենօտներ» օպերան։ Այդ ներկայացումը օրիորդ Դվօրէցի բենէֆիսը լինելով, թատրոնը գրեթէ լի էր։ Օրիորդը բաւական շատ ընծաներ ստացաւ՝ մի քանի ծաղկեայ փունջեր և մի քանի թանդագին իրեր։ Ընդհանրապէս օպերան վատ չէր գնում, բայց դարձեալ իտալական օպերայի ժամանակ մեր կարծիքով այդ օպերան անհամեմատ աւելի լաւ էր գնում և աւելի խոր տպաւորութիւն էր գործում։ Մեր խորին համոզմունքն է որ Մեյերբէրի այդ հրաշալի և վերին աստիճանի դժուար օպերան բոլոր մեր այժմեան երգիչների ոյժերից վեր է։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Այստեղի հացավաճառները, որոնք մեծ մասամբ թուրքեր են, երբէք չեն ուզում հնազանդվել քաղաքային վարչութիւնից հացի վրա նշանակված տակսային։ Շատ անդամ երբ առնողները պահանջում են հացավաճառներից ծախել հացը համեմատ տակսայի, թուրք հացավաճառները առանց այլ և այլութեան փակում են խանութները և առնողները կամ առանց հացի են մնում, կամ ստիպված են լինում, երբ խանութները բացվում են, առնել հացը թուրք հացավաճառի ուղած գնով։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մարդասիրական ընկերութեան նոր կառուցանելի ուսումնարանի շինութեան հիմքը, ինչպէս լսում ենք, որոշված է Վարդանանց տօնի օրը օրհնել։ Շինութեան ծախսը նշանակված է 125,000 բուբլի, որից միայն 45,000 բուբլի ծախս է պահանջում ընդհանուր դահլիճը իր կողմնակի մի քանի սենեակներով։ Վերոյիշեալ դումարից ընկերութիւնը ունի թէ առձեռն և թէ ապառիկներով մօտ 35,000 ր., որով, ի հարկէ, անկարելի է սկսել մի այդպիսի մեծ գործ։ Բայց աչքի առաջ ունենալով այն իրաւասական խօսքերը, որոնք ընկերութեան ընդհանուր ժողովում լսվում էին շատերի բերանից, ընկերութիւնը վստահանում է ձեռնարկել մի այդպիսի դժուար գործի։ Արդէն կազմված է հինգ անդամից մի մասնաժողով և հրաւիրված է ճարտարապետ Կարապետեան շինութեան վրա հսկելու համար։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Մօտ քսան տարի է որ իւրաքանչիւր տարի այս կամ այն թատերասէրների խումբը տալիս է մի քանի ներկայացումներ, բայց այդքան տարվայ ընթացքում բեմական գործը դարձեալ առաջադիմութեան մի քայլ անդամ չարաւ և չը դրվեց հաստատուն հիմքերի վրա։ Ամեն մի նոր դերասան, որ գալիս էր, ամենայն ինչ սկսում էր նորից։ Ամենայն ինչ ստիպված էր ամեն մի նոր դերասան, ինչպէս ասվեցաւ,

տատ հիմունքների վրա, այնպէս որ դեռ մինչև այսօր մեր քաղաքը չունի մի սեփական թատրոնական բեմ իր անհրաժեշտ պարագաներով։ Ինչ կը վերաբերի քաղաքային կլուբի դահլիճում յարմարեցրած բեմին, նա թէ իր չափազանց փոքրութեամբ և թէ իր հնացած, մաշված դեկորացիաներով և գծուծ հանդերձներով ներկայացնում է ամեն կողմից անյարմարութիւններ։ Բացի սրանից այս բեմը կազմում է ռուս թատերասէրների խմբի սեփականութիւն և գտնվում է նրա իրաւունքի տակ։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Ներկայումս տեղիս հասարակութեան ուշադրութիւնը զբաղված է ս. Լուսաւորիչ եկեղեցու երեսփոխանի հաշուետուութեան հարցով։ Այդ եկեղեցու երեսփոխիը իր համար մի տեսակ մենաշնորհ էր դարձրել երեսփոխանութիւնը, որը ժառանգելով հօրից, մօտ 17 տարի է ինչ վարում է այդ պաշտօնը, և այդքան ժամանակի ընթացքում ոչ մի անգամ մի կանոնաւոր հաշիւ չէ ներկայացրել հասարակութեանը։ Այդ պատճառով ժողովրդի մէջ մի տեսակ խուլ տրտունջ և կասկածանք էր տիրում և վերջապէս, երբ անցեալ ամիս տեղիս բարեկարգիչը եկեղեցում կարդաց պ. երեսփոխանի շատ կարճառօտ հաշիւը, ժողովուրդը բողոքեց դրա դէմ և պահանջեց, որ մի մասնաժողով ընտրվի այդ հաշիւը ստուգելու համար։ Այդ ժամանակ իսկոյն հանդէս եկաւ պ. երեսփոխի կուսակցութիւնը, և յայտնեց, թէ ինքը գոհ է ներկայացրած հաշուից և ընդդէմ է մասնաժողով ընտրելու մտքին։ Բայց հակառակ կուսակցութիւնը պնդելով իր պահանջի վրա, ընտրեց հինգ անդամից բաղկացած մասնաժողով, որը, ինչպէս լսում ենք, հաշիւները քննել, վերջացրել է. հետեւանքի մասին կը հաղորդենք ձեզ։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մի խումբ երիտասարդներ և մի ուրիշ խումբ օրիորդներ մտադիր են պարահանդէսներ տալ բարեգործական նպատակով։ Մարդասիրական ընկերութեան գրադարանի օգտին տուած պարահանդէսը զուտ արդիւնք տուեց 623 ռուբլի։»

—

Վերջին օրերումս շարունակ տեղացող անձրևների պատճառով ջրի մակերևոյթը Կուր գետում նշանաւոր կերպով բարձրացաւ։

—

Կիրակի, 21-ին փետրվարի, ինչպէս հաղորդում է «Нов. Обозр.» լրագիրը, Թիֆլիսի բոլոր թաղերում պոլիցիայի ձեռքով խուզարկութիւններ կատարվեցան և յայտնվեցաւ, որ 84 մարդ ապրում են Թիֆլիսում առանց որ և է պոլիցիական վկայաթուղթ ունենալու։ Ձերբակալված 84 մարդկանց անմիջապէս տրվեցան անցաթղթեր և բոլորն էլ ուղարկվեցան իրանց ծննդավայրերը։

—

Երկու օր շարունակ Ռուսաստանի փոստը Թիֆլիսում չէ ստացվել։ Կովկասեան սարերի վրա եկած մեծ ձիւնի պատճառով բոլոր յարաբերութիւնները Վլադիկավկասի հետ ընդմիջված են, նոյն իսկ Վլադիկավկասից Թիֆլիս տանող հեռագրական թելը կտրված է։

—

Փետրվարի 23-ին կայացաւ Կովկասեան բժշկական ընկերութեան արտակարգ նիստը Աչալայի և Կուրի ջրերի յատկութիւնը վերջնականապէս որոշելու համար։ Նախորդ արձանագրութիւնները կարդալուց և կարճատև առարկութիւններից յետոյ ժողովի նախագահը ձևակերպեց հարցի գլխաւոր կէտերը, և ձայների առաւելութեամբ ընդունվեցան յանձնաժողովի զեկուցման մէջ յայտնված կարծիքները։ Այդպիսով ուրեմն բժշկական ընկերութիւնը առաւելութիւն տուեց Աչալայի աղբիւրների ջրին։

—

Մեզ հաղորդում են, որ մտադրութիւն կայ շուտով Բագուի մէջ մի նոր տպարան հիմնելու, ուր յատկապէս կը տպագրվեն թուրքերէն հրատարակութիւններ։

—

Վաղը, փետրվարի 26-ին, ռուսաց դերասանական խումբը դրամատիական թատրոնում դերասան Ֆաղդէեվի բենեֆիսին ներկայացնելու է «Ռիշելիո» յայտնի դրաման։ Ռիշելիոի դերը պէտք է կատարէ ինքը Ֆաղդէեվ, որը, ինչպէս ուրիշ շատ դերեր, այնպէս և այդ դերը կատարում է մեծ աջողութեամբ։

—

Փետրվարի 22-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնում քննվեցաւ մի հետաքրքիր գործ,—մի ոմն շուշեցի, Աւագ Յակոբջանեան Քէշիշեանց մեղադրվում էր երկու կին ունենալու մէջ։ Քննութիւններից երևում է, որ յիշեալ Քեշիշեան 1880 թուականին Թիֆլիսում պըսակվեցաւ այրի կին Հռիփսիմէ Մովսէսեանի հետ, մինչդեռ 1870 թուականին արդէն Ղարաբաղի գիւղերից մէկում պսակվել էր մի աղջկայ հետ, ապրել էր նրա հետ շատ տարիներ, և ունէր արդէն այդ առաջին կնոջից զաւակներ։ Ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, այդ բոլորը հաստատել է և Շուշու հայոց թեմական կոնսիստորիան։ Դատարանը մեղաւոր համարելով Քէշիշեանին երկրորդ անգամ պսակվելու մէջ, քանի որ առաջին կինը դեռ կենդանի և անբաժան է իրանից, վճռեց զրկել նրան բոլոր առանձնական, և անձնական իրաւունքներից և երկու տարով յանձնել նրան ուղղիչ զօրաբաժինը. իսկ եթէ այդ բաժնում տեղ չի լինի, ենթարկել նրան բանտարկութեան երկու տարով։ Ի դէպ, չենք կարող չը նկատել, որ երկու կին ունենալու ախտը Ղարաբաղի յետընկած գիւղերում արդէն եղակի երևոյթ չէ. թէև շատ անգամ՝ երկրորդ կին ունենալ ցանկացողները՝ պատասխանատուութեան չենթարկվելու համար, երկրորդ կնոջ պսակը կատարում են ամենայն գաղտնապահութեամբ։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Տղայոց դպրոցի շինութիւնը միանգամայն հակառաջադիմական կերպարանք է ստացել։ Տեղական վանքի սենեակները, ուր դեռեղված են դասատները, շատ քիչ յարմարութիւններ են ներկայացնում դպրոցի համար, դասատները ձմեռը ցուրտ են լինում, փոշին անպակաս է. շատերն էլ բաւականաչափ լոյս չունեն։ Վանքի սենեակները իսկապէս դպրոցի համար չեն շինված. եթէ դպրոցի վարչութիւնը մի փոքրիկ ծախս անէր, կարող էր սենեակները յարմարեցնել ուսումնարանական աւդջութեան պայմաններին. բայց, տարաբաղդաբար, տարիներով ոչինչ վերանորոգութեան չենթարկվելով, այդ սենեակները այժմ ողորմելի կերպարանք են ստացել։ Սխալված չենք լինի եթէ ասենք, որ վանահօր բնակարանի վերանորոգութեան վրա աւելի հոգացողութիւն է լինում, քան թէ ամբողջ տղայոց դպրոցի վրա։ Զարմանալին այն է, որ նոյն իսկ ուսուցչական խումբը մի տեսակ անհոգութեամբ է նայում դպրոցի այդ հակառաջադիմական դրութեան վրա։»

—

Փետրվարի 26-ին, ուրբաթ օր, առաւօտեան 12 ժամին, իգական գիմնազիայի դահլիճում կը կայանայ Թիֆլիսի «Վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան» ընդհանուր ժողովը։ Այդ ժողովում կը կարդացվեն հաշիւները, կը քննվեն նախահաշիւները և ի միջի այլոց կը քննվի ընթերցարանի և էժան բնակարանների խնդիրը։ Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք։

—

Մեզ հաղորդում են, որ դերասան Ադամեան, մտադրութիւն ունի, Ռուսաստանի մի քանի քաղաքներում ներկայացումներ տալուց յետոյ, գնալ արտասահման, եւրոպական մի քանի երկիրների քաղաքներում բեմ դուրս գալու համար։ Եւրոպայում պ. Ադամեան կը խաղայ ոչ թէ միայն ֆրանսերէն, այլ և հայոց լեզուով։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի ամիս սրանից առաջ Դարալագեազի Ս. Խաչ ուխտատեղում հայերի և թուրքերի մէջ պատահած կռուի գործը քննելու համար այժմ ուղարկվել է այստեղից մի քննիչ։ Այդ անցքը իր ժամանակին բաւական ուշադրութիւն գրաւեց, և հետաքրքիր է տեսնել թէ դատաստանական քննութիւնը ինչպէս կը բացատրէ այդ եղելութիւնը»։

—

Տեղական արդիւնաբերութեան զարգացման համար, ժողովրդական լուսաւորութեան և պետական կալուածների մինիստրութիւնների համաձայնութեամբ՝ մտադրութիւն կայ այս ամառ Կիեվ և Զերնիգով քաղաքներում հիմնելու շերամապահական կուրսեր՝ ժողովրդական դպրոցների վարժապետների համար։

—

Հաստատ աղբիւրից լսում ենք, որ Մոսկվայի «Малый» անուանված թատրոնի ռուսաց դրամատիական խումբը ԹԻՖԼԻՍ գալով, յունիսի 15-ին քաղաքային թատրոնում կը տայ մի շարք ներկայացումներ։ Ինչպէս յայտնի է Մոսկվայի ռուսաց դրամատիական խումբը համարվում է առաջինը ամբողջ Ռուսաստանում. նրան մասնակցում են այնպիսի ոյժեր, ինչպէս տ.տ. Ֆեդոտովա, Երմոլովա և այլն։

—

ԵՐԷՔՇԱՐԹԻ, փետրվարի 23-ին, վրաց դերասանական խումբը Բանկի թատրոնում ներկայացրեց յօդուտ տ. Աքաչիձէ-Սափարովա դերասանուհու Ֆրանսերէնից թարգմանված «Երկու որբեր» դրաման, չորս գործողութեամբ և 6 պատկերներով ու մէկ վոդեվիլ ռուսերէնից թարգմանված։ «Երկու որբեր» պիէսան Ֆրանսիական մի անբովանդակ և սիրտ մաշող մելոդրամա է, որի մէջ ոչինչ չը կայ, բացի բեմական էֆէկտներից և պատկերներից։ Տիկին Սափարովա, որ վրաց բեմի զարդն է համարվում, տարաբաղդաբար, այդ դրաման ընտրելով իր բենեֆիսի համար, այնպիսի դեր էր կատարում, որի մէջ չէր կարող ցոյց տալ իր տաղանդի ամենաանչնչան մասն անգամ։ Առհասարակ ներկայացումը թոյլ անցաւ, չը նայելով որ ներկայացմանը մասնակցում էին վրաց թատրոնի ամենալաւ ոյժերը։ Տիկին Սափարովա մի քանի թանգագին ընծաներ և պսակներ ստացաւ։ Ներկայացումը վերջացաւ գիշերվայ 1 ժամին։

—

Թիֆլիսի շրջմոլիկները շարունակում են քաջագործութիւններ անել, որոնցից սովորական կարող է համարվել հետեւեալ դէպքը, որի մասին մեզ հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւնները. «Փետրվարի 23-ին Թիֆլիսի նահանգական դատարանի առջև կանգնած էին մի խումբ գիւղացի թուրքեր, ըստ երևոյթին սողանչուղցի, որոնք կանչված էին դատարան իբրև վկաներ։ Այդ թուրքերը բոլորն էլ սովորաբար խանչալներ են ունենում գօտիներից կախած։ Դրանց մօտենում է մի ֆրանտ, և յայտնելով որ դատարանի դահլիճը խանչալներով մտնել անկարելի է, համոզում է, որ խանչալները տան իրան և ինքը մի խանութում պահ կը տայ, մինչև որ իրանք կը վերջացնեն դատարանում գործը և դուրս եկած ժամանակ յետ կը վերցնեն։ Միամիտ թուրքգիւղացիները, հաւատալով այդ ֆրանտ շրջմոլիկին, յետ են անում գօտիներից իրանց խանչալները և տալիս անծանօթին, որը իսկոյն տանում պահ է տալիս մօտիկ մի խանութում։ Երբ որ թուրք գիւղացիները մտնում են դատարանի դահլիճը, յիշեալ սրիկան անմիջապէս մտնում է խանութը և յետ ստանում խանչալները և վերցնելով իսկոյն և եթ անյայտանում է։ Խեղճ գիւղացի թուրքերը դուրս գալով դատարանից, նոր են հասկանում թէ ինչ քաղաքավարի խաբեբայութեան զոհ են դարձել,—բայց, ի հարկէ, արդէն ուշ էր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—

Երեք տարուց աւելի դիպլոմատիական սեղանի և պատերազմի դաշտի վրա արծարծվող բոլգարական հարցը, որը վերջին ամիսների ընթացքում մի փոքր կարծէք մոռացութեան էր տրված, նորից հանդէս եկաւ և կրկին դարձաւ եւրոպական դիպլոմատիայի զբաղման գլխաւոր նիւթը, գլխաւորապէս այն առաջադրութիւնների շնորհով, որը անում է Ռուսաստանը։ Ռուսաստանը չէ ընդունում Բոլգարիայում իշխող այժմեան կառավարութիւնը. նա առաջարկութիւն է արել եւրոպական պետութիւններին՝ հեռացնելու պրինց Ֆերդինանդին, և բոլոր վերջին տեղեկութիւնները թեքվում են այն կողմ, որ եւրոպական պետութիւնները, եթէ ոչ ամենքն էլ, գէթ դրանցից շատերը հակված են ընդունելու Ռուսաստանի առաջարկութիւնները։

Առ այժմ պետութիւնները մի որոշ վճիռ չեն կայացրել, մինչև այժմ թուրքաց կառավարութիւնը դեռ մի որոշ քայլ չէ կարողանում անել,—բայց ինչպէս և լինի, ի հարկէ մի որոշ հետեւանքի պէտք է հասցնեն այն բոլոր յարաբերութիւնները, որոնք սկսված են պետութիւնների մէջ, քանի որ այդ պետութիւնները չեն ցանկանում Բոլգարիայի առիթով խաղաղութիւնը վրդովել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ գերմանական թագաժառանգի հիւանդութիւնը վտանգաւոր կերպարանք է ընդունել. բժիշկներից մի քանիսը արդէն յոյս չունեն, որ նա կարողանայ առողջանալ։

—Ֆրանսիա ներմուծվող մի քանի իտալական ապրանքների մաքսահարկը մեծացրած է։

—Աւստրիան, ինչպէս երևում է վերջին լուրերից, հրաժարվում է առ այժմ մի որոշ դիրք բռնելուց բոլգարական հարցում. նրա օրինակին է հետևում և Իտալիան։

—Ամերիկական լրագիրները հաղորդում են, որ մարտի 25-ին Վաշինգտոնում կայանալու է կանանց կոնգրես։ Կոնգրեսի գումարման գլխաւոր նպատակը կանանց իրաւունքների խնդիրն է։

—Վիէննայից գրում են, որ լորդ Սալիսբրիի յայտնած կարծիքները բոլգարական գործերի վերաբերութեամբ, այնտեղ հանդստացնող տպաւորութիւն են թողել։

—Բաղենի դքսութեան մէջ ֆինանսների մինիստրի պաշտօնի վրա նորերումս նշանակված է մի հրէայ, պ. Էլշտատտէր։ Այդ նշանակութիւնը մեծ աղմուկ դցեց ամբողջ Գերմանիայում, որովհետև դեռ ևս երբէք չէ պատահել, որ հրէաները Գերմանիայում հասնէին այդ տեսակ բարձր պաշտօնների։

—«Արևելքի» մէջ կարդում ենք. «Սուլթանը տեղեկանալով, որ իսլամ ժողովրդէն ոմանք իրենց աղջիկներն օտար վարժարաններ կը ղրկեն դաստիարակուելու համար, հրամայած է բարձր Շեյխուլ-Իսլամ էֆէնդիին, որ արգելու և ցարդ յաճախողներն ալ հանել տայ այդ վարժարաններէն։ Ն. բարձրութիւն անմիջապէս գործադրելով կայս. այս հրամանն, հարկ եղած հրահանգները տուած է առ որ անկ է»։

—«Daily News» լրագրում կարդում ենք, որ իբր թէ թիւրքաց մինիստրութիւնը Սուլթանի հայեցողութեանը կարծիք է առաջադրել թիւրքաց դեսպաններին եւրոպական պետութիւնների մայրաքաղաքներից յետ կանչելու, և նրանց տեղ միայն դիպլոմատիական գործակատարներ թողնելու, իր այդ կարծիքը պատճառաբանելով թիւրքիայի գանձային նեղ դրութեամբ, քանի որ երկու ամիս է արդէն, որ Բ. Դրան դեսպանական պաշտօնեաները Եւրոպայում մի ղրուշ անգամ չեն ստացել իրանց ռոճիկից։ Բայց Սուլթանը յոժար չէ երևում իր մինիստրների այդ խորհրդին հետևելու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կարդինալ Ռիշելիո հետևում էր կեանքի հետեւեալ կանոններին։ Պէտք աշխատել շատ քիչ խօսել և միայն այն բանի մասին, որ մարդը հաստատ գիտէ. պէտք է կարգով և դէպքին յարմար խօսել։ Ուրիշի առջև մարդը երբէք իրան չը պէտք է ցոյց տայ ցրված, տխուր, մելամաղձոտ։ Երբ մէկը ձեզ հետ խօսում է, դուք երբէք չը պէտք է ուրիշ կողմ նայէք, այլ ուղիղ խօսողի երեսին։ Պէտք է ուշադրութեամբ և քաղաքավարութեամբ լսել, բայց իր համակրութիւնը և ցաւակցութիւնը պէտք է աւելի լռութեամբ և դէմքի արտայայտութեամբ ցոյց տալ, քան թէ խօսքերով։ Երբէք չը պէտք է ուշադրութիւն դարձնել բամբասանքներին և չը պէտք է ականջ դնել այն մարդկանց, որոնք բամբասանքներ են հաղորդում, նոյնպէս չը պէտք է շարունակել տարածել այդ լսած բամբասանքները։ Պէտք է շատ զգոյշ և զուսպ լինել խօսքերի մէջ, բայց մանաւանդ գրութեան մէջ, և եթէ առանձին հարկաւորութիւն չը կայ՝ երբէք չը պէտք է պատմել լսածը և մանաւանդ չը պէտք է այդ լսածը նամակով հաղորդել, նոյն իսկ ձեր ամենամօտ բարեկամներին։

* * *

Ցայտնի բնագէտ, պրոֆէսոր Վ ի ր խ օ վ, որին մենք Թիֆլիսեցիներս էլ, քանի մի տարի առաջ, հնադիտական ժողովի ժամանակ պատիւ ենք ունեցել հիւրասիրել մեզ մօտ, այս օրերս, ինչպէս հաղորդում են լրագիրները, թողեց Բերլին քաղաքը և ուղևորվեցաւ դէպի Եգիպտոս, որտեղ նա դիտաւորութիւն ունի անտրոպոլոգիական հետազօտութիւններ անելու։

* * *

Մի մայր տուն վերադառնալով, հարցնում է իր փոքրիկ երեխաներին՝ աղջկան և տղային, ինչ էին անում նրանք իր բացակայութեան ժամանակ։

—Մենք խաղում էինք, մայրիկ։

—Ի՞նչպէս էիք խաղում։

—Ես կին էի, իսկ Արշակը իմ մարդս էր, պատասխանեց փոքրիկ աղջիկը։

—Լաւ, ինչ էիք անում մարդ ու կին եղած ժամանակ։

—Մենք ներկայացնում էինք ընտանեկան կեանքը։

—Ի՞նչպէս....

—Ահա եթէ ուզում ես, մայրիկ, չարունակեց աղջիկը, ես քեզ ամեն բան մանրամասնաբար կը պատմեմ։ Ես սեղան գցեցի, յետոյ մարդս եկաւ, նստեցինք ճաշի, բայց սուպի առաջին գդալը փորձելուն պէս նա սաստիկ բարկացաւ ինձ վրա և ասեց. «այդ տեսակ անպիտան սուպ կարող են միայն շները լափել»։ Ես, ի հարկէ, նրան յիմար անուանեցի, աւելացնելով, որ չատ ցաւում եմ, որ ամուսնացել եմ այդ տեսակ անսիրտ մարդու հետ, նա էլ ինձ յիմար անուանեց և անմիջապէս վերկենալով դուրս եկաւ սենեակից, սաստիկ խփելով դուռը իր ետևից։

* * *

Ռուս յայտնի երաժշտական հեղինակ Զայկովսկի, գտնվելով այժմ արտասահմանում, այս օրերս այցելեց Պրագա քաղաքը։ Չէխերը ընդունեցին ռուս հեղինակին հանդիսաւոր կերպով, մեծ ցոյցեր արեցին ի պատիւ նրան, ակնարկելով իրանց համերաշխութեան վրա սլավեան ընդհանուր ցեղի հետ։

* * *

Լուր կայ, որ ֆրանսիական հանրապետութեան նախագահ պ. Կարնօի անդրանիկ որդին այս օրերս պիտի ամուսնանայ հանդուցեալ բանաստեղծ Վիկտոր Հիւգոի թոռան, օրիորդ Ժաննա Հիւգոի հետ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԻՐԿՈՒՏՍԿ, 22 փետրվարի։ Այստեղ հասաւ ինժինէր Մէժէնինով, Ցօմսկի և Աչինսկի մէջ երկաթուղու գիծ անցկացնելու նպատակով կատարված հետազօտութիւնների մասին գեներալ-նահանգապետին զեկուցում ներկայացնելու համար։ Հետազօտութիւնները մինչև Իրկուտսկ կը շարունակվեն ամառը։ Ցօմսկում սպասվում է ինժենէրների նոր խումբ։

ԼՈՒԳԱՆՍԿ, 22 փետրվարի։ Սլավեանօ-Սերբսկի գաւառում, Լիբիմովի կալուածքում, Գէօրգիեվսկ աւանի մօտ, գտնված են գլաուբէրեան աղի պահեստներ։ Դիտաւորութիւն կայ սկսել դրանից սօդա մշակել։

ՓԱՐԻԶ, 22 փետրվարի։ Ազգային ժողովի համար վերջին լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ գեներալ Բուլանժէ ստացաւ 50,000 ձայնից աւելի այլ և այլ դէպարտամենտներում։ Այդ քուէարկութիւնները համարվում են մի քաղաքական ցոյց և դեռ ևս չարունակվում են։ Բուլանժէ գրեց պատերազմական մինիստրին մի նամակ, որի մէջ յայտնում է, որ նա խնդրում է իր բարեկամներին ձայն չը տալ իր համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվարի։ Կազակների զօրքի մանաժողովի անդամ, գեներալ-մայոր Խորոշխին նշանակված է Զաբայկալեան շրջանի զինուորական նահանգապետ։—Պատերազմական ժամանակ երկաթուղիների գործունէութեան ուժեղացման համար հրատարակված են կանոններ, այդ երկաթուղիներում ազատ վարձով ծառայող պահեստի զինուորներին ընդունելու մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվարի։ Բաղուի նահանգական դատարանի անդամ Պրցիսլաւուրի, որ մեղադրված էր Նոյն դատարանի անդամ Սօբոլեվսկուն գրաւոր կերպով վիրաւորելու մէջ, արդարացրած է սենատից։ Նոյնպէս արդարացրած է Եկատերինօդարի դատարանի նախագահ Մօպպա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 փետրվարի։ Այսօր կայացաւ Պետերբուրգում գտնված զօրքերի Բարձրագոյն երկրորդ զօրահանդէսը։

Կ. ՊՕԼԻՍ, 24 փետրվարի։ Մինիստրների խորհուրդը վճռեց ընդունել ռուսաց առաջարկութիւնը Կօբուրգեան իշխանին ապօրինի կառավարիչ հրատարակելու վերաբերմամբ և Սուլթանի իրադէի համաձայն, համապատասխան հաղորդագրութիւն ուղարկեց Ստամբուլովին։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 24 փետրվարի։ Մեծութիւններին վիրաւորելու համար պատժի դատապարտված Պան անունով մէկին պատգամաւոր ընտրելու պատճառով մինիստր նախագահ Բրիատիանօ հրաժարական տուեց։ Սակայն, կարծում են, որ Բրատիանօ կը մնայ իր պաշտօնում։

ԲԷԼԳՐԱԴ, 24 փետրվարի։ Այստեղ տեղեկութիւն է ստացված, որ հիւսիս-արևելեան Բոլգարիայում բուական ծանր յուզմունք է սկսվել Կօբուրգեան իշխանի դէմ։ Հոգևորականութիւնը ակնյայտնի թշնամական դիրք է բռնել դէպի ինքնակոչ իշխանը։

ՓԱՐԻԶ, 24 փետրվարի։ Պատերազմական մինիստրը պատգամաւորների ժողովում բացատրեց իր առաջարկած օրինագծի նշանակութիւնը զօրքի գեներալ-տեսուչների մասին՝ զօրքերը պատերազմի համար և երկրի աւելի լաւ պաշտպանութեանը պատրաստելու անհրաժեշտութեամբ։ Օրինագիծը յանձնվեցաւ պարլամէնտի զինուորական յանձնաժողովին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 23-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	124	ր. 50	կ.
Համբուրգի վրա 100 մարկ — . .	61	» 10	»
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	49	» —	»
Ոսկի — արժէ — . .	9	» 92	»
Մաքսային կուպօններ — . .	197	» —	»
Արծաթ — — — . . .	1	» 42	»
Բօրսային դիսկօնտներ — .	6¼ և	7¼%	»
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	» 62	»
— — — — 2-րդ —	97	» 75	»
— — — — 3-րդ —	97	» 62	»
— — — — 4-րդ —	98	» —	»
— — — — 5-րդ —	97	» 62	»
— — — — 6-րդ —	—	» —	»
Նոր 4% փոխառութիւն	81	» 50	»
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	98	» 37	»
— — 2-րդ —	97	» 25	»
— — 3-րդ —	97	» 25	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	255	» 75	»
— երկրորդ —	246	» 50	»
5½% րենտա	103	» —	»
Ոսկեայ րենտա	197	» 25	»
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն	170	» 50	»
Նոր երկաթուղային րենտա . . .	97	» 50	»
5% դրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	168	» —	»
Գրաւ. թղ. Ազն. բանկի . . .	98	» —	»
5½% դրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի.	99	» 62	»
6% դրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	102	» —	»
— — Պոլտավայի — —	101	» —	»
— — Պետ. Ցուրսկ. — —	101	» —	»
— — Կիևի — —	101	» 50	»
— — Մօսկվայի — —	102	» —	»
— — Բեսարաբ. Ցարի. —	101	» —	»
— — Նիժ. Նովգոր. —	100	» —	»
— — Վիլնայի —	101	» —	»
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	—	» —	»
— —Քութայիսի-18 և 43 տ.	—	» —	»
Վլաժսկո-Կամսկի բանկի ակցիաները	650	» —	»
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	272	» —	»
Ռիբինսկ-Վոլգովի ընկ.	81	» —	»
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	94	» 25	»
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	94	» —	»
Օդէսայի — — .	93	» —	»
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	—	» —	»

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը —

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԾԵՐԵՆՑԻ (ԴՕԿՏՕՐ ՇԻՇՄԱՆԵԱՆԻ)

Պատմական վէպերը՝

1. Թորոս Լևոնի . . . . . գին է 1 ռուբլի
2. Երկունք իններորդ դարու . . . . . „ 1 „
3. Թէոդորոս Ռշտունի . . . . . „ 1 „

Վաճառվում են դրանց հրատարակող Զաքարիա Գրիգորեանցի „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ"։ Հանցէն. Тифлисъ „Кавказская Книжная Торговля".

1—6

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդարանում մարտ ամսի 30-ին, ներկայ 1888 թվին, երեկոյեան 8 ժամին լինելու է ամուրդ (առանց կրկնաձայնի) կապալով տալու մոմավաճառութիւնը հայոց եկեղեցիների և ժողովրդականների համար։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ, ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամ կէսօրի։

Հոգաբարձու Աբգար Յովհաննիսեան
Գործավար Բ. Հ. Զալալեան

2—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԼԷՕԻ „ԾԱՅՐԵՐ"-Ը
ԳԻՆՆ Է 20 ԿՕՊԷԿ

Կարելի է ստանալ Թիֆլիսում՝ Յոհան Դաւթեանից (Ելիզավետեան փողոց, № 25) և „Աղբիւրի" վաճառանոցում։ ԲԱԳԻՈՒՄ՝ Տիգրան Ղոնդախսազեանից, ՂՈՒԲԱՑՈՒՄ՝ Խաչատուր Փանեանցից, ՆՈՒԽՈՒՄ՝ Սիմէոն Շահբազեանցից և ՇՈՒՇՈՒՄ՝ Անդրէաս Աբրահամեանցից

5—5 (Շ. Հ.)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ **ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԴՊՐՈՑՈՒՄ** վաճառվում են ամեն տեսակ թէ մրգատու և թէ զարդի բոցսերը։ Պահանջման ժամանակ պրէյսկուրանտները անվարձ են ուղարկվում։

4—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, մարտի 3-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ (MINGRÉLIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմշօղլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Աբծրունի գալերէում, № 103.

4—4



ՊՐՈՎԻԶՈՐ **Ա. ՇՏԷԽԵՐԻ** ՄԻԶՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՈԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ, ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ։
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ազմուրովի դեղատներում։ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ՝ Բէկկէրի մօտ, ՌՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ Կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։ (Հ.)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова).
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ։

ՀԱՆՐԱՅԻՆ ՁՐԵՐ, Կովկասեան և արտասահմանեան, այս գարնանը չիչերի մէջ նոր ածված ՅԵՑԻՑ ԵՒ ՄԻԶԱՏՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ, Նաֆթալին, քսմֆօրա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Դալմաթիայի փոշի, և Բուրէլի անթեմ կոչված բոյսը։

ՕԴԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ պրոֆէսօր ԿԻՏՏԱՐԱՑԻ, կարբոլացրած փոշի երկաթի արճասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը խտակելու համար, կարբոլեան թթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խլօրային կիր, ծծումբ, երկաթի արճասպ և Մարդանեցի կրկնաթթուտ։

86—100 (Հ.)

„ԱՂԲԻՒՐԻ" ՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ տ. Միրզոեվի

Թիֆլիսում բացված է „Աղբիւրի" վաճառանոց, յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար։ „Աղբիւրի" վաճառանոցում ծախվում են մանկական գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ. տրվում են նոյն վաճառանոցում մենագրաֆներ (գարդարուն գլխատառեր նամակների ճակատներին). գրելու, փօստի և ՑՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտիր ԹՂԹԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ, որ կազմում է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՐԳՈՒՆԻՆ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ՀՌՉԱԿԱՒՈՐ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ։

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակվող մանկական թերթերի բաժանորդագրութիւն։

Վաճառանոցը կամենալով դիւրացնել գաւառաբնակ հեղինակների, թարգմանիչների գործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները։ Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել իրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշայներ։ Վարձու է տալիս „Աղբիւրի" ծաղկատառերից և նկարներից։—Վաճառանոցը ընդունում է կոմիսիայով ծախելու զանազան հրատարակութիւններ։

Վաճառանոցում զետեղված է և „Աղբիւրի" խմբագրութեան գրասենեակը, ուր միայն կարելի է բաժանորդ գրվել „Աղբիւրին"։

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Магазинъ Дѣтскаго журнала „Агбюръ".

6—10 (Հ. Ե)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
Կ՚ԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԷՆԿԼԷՎՍԿԻ—11—12 ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և ատամների ց.
ՍՕԲՕԲԷՎ—11—12 ժ. ատամնաբոյժ.
Ա. ԳՈՒՐԿՕ—12—1 ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. ամեն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
ՁԱԵՎՍԿԻ—5—7 ժ. ջղային ց. և էլէկտրօ-տերապիա.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց ց.
Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մօզեր։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ։ Աշխատական անկողիններ.
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԴԿՕՎՍԿԻ

Дозволено цензурою, Тифлисъ 24 Февраля 1888 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.